ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«4» մարտի 2016 թ. N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՎԻԹ ԲԵԿ, ՍՅՈՒՆԻՔ, ՍԵՎԱՔԱՐ, ԵՂՎԱՐԴ, ՆՈՐԱՇԵՆԻԿ, ԱՐԾՎԱՆԻԿ, ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից 2016 թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում կատարված մոնիթորինգի արդյունքները՝ մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2016 թվականի գարնանը մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումների իրականացման համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դավիթ Բեկ, Սյունիք, Սևաքար, Եղվարդ, Նորաշենիկ, Արծվանիկ, Ագարակ համայնքներին հատկացվող «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի բաշխացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Կազմակերպության տնօրեն Ա. Ավագյանին՝

1) ապահովել «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի տեղափոխումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզկենտրոն և անհատույց հանձնումը

մարզպետարանին սույն հրամանի հավելվածով սահմանված չափաքանակով,

2) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդող ամսվա 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել հաշվետվություն օգտագործված «Ռոդիֆակում Ս» բույսերի պաշտպանության միջոցի քանակության վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղիյանին և նախարարի տեղակալ Ս. Գալստյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված

ՀՀ գուղատնտեսության նախարարի
2016 թվականի մարտի ____ -ի N _____ -Ա հրամանի

ԲԱՇԽԱՑՈՒՑԱԿ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՎԻԹ ԲԵԿ, ՍՅՈՒՆԻՔ, ՍԵՎԱՔԱՐ, ԵՂՎԱՐԴ, ՆՈՐԱՇԵՆԻԿ, ԱՐԾՎԱՆԻԿ, ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ «ՌՈԴԻՖԱԿՈՒՄ Ս» ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ

Համայնքը	Տարածությունը (հա)	Բույսերի պաշտպանության միջոցի քանակը (կգ)
Դավիթ Բեկ	280	22.4
Սյունիք	270	21.6
Սևաքար	120	9.6
Եղվարդ	280	22.4
Նորաշենիկ	110	8.8
Արծվանիկ	230	18.4
Ագարակ	210	16.8

Ընդամենը	**1500**	**120**